



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱԿՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏ

Կ Ա Ր Գ Ա Դ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

7 հուլիսի 2017 թվականի N 27 - Ա

ԲԱԳՐԱՏԱՇԵՆԻ ՄԱՔՍԱԿԵՏԻ ԴԻՄԱՑԻ ՀԱՏՎԱԾՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ՏԵՂԱԴՐՎԱԾ  
ՏԱՂԱՎԱՐՆԵՐԻ ԱՊԱՄՈՆՏԱԺՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ  
ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6 - ի թիվ ՆՀ - 728 հրամանագրի 1.6 - րդ կետով

կարգադրում եմ.

1. Բագրատաշենի մաքսակետի դիմացի հատվածում ինքնակամ տեղադրված տաղավարների ապամոնտաժման նպատակով ստեղծել հանձնաժողով հետևյալ կազմով.

Գրիշա Բաղայան - հանձնաժողովի նախագահ, ՀՀ Տավուշի մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության պետ

Արծրուն Նազարյան - ՀՀ Տավուշի մարզպետարանի աշխատակազմի հողաշինության և հողօգտագործման բաժնի վարիչ

Միսակ Մելքումյան - ՀՀ Տավուշի մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության գլխ. մասնագետ

Արայիկ Պարանյան - Այրում համայնքի ղեկավար /համաձայնությամբ/

Գիգոլ Եգանյան - Այրում համայնքի ղեկավարի տեղակալ /համաձայնությամբ/

2. Հանձնաժողովին՝ սահմանված կարգով միջոցներ ձեռնարկել Բագրատաշենի մաքսակետի դիմացի հատվածում ինքնակամ տեղադրված տաղավարների ապամոնտաժման համար և ներկայացնել հաշվետվություն:

3. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

2017թ. հուլիսի 7  
ք. Իջևան



Հ. ԱՐՈՎՅԱՆ